ԳԼՈՒԽ ՄԷ.

Ամենայն վճիռ 'ի որում դատաստանէ և 'ի աշխարհէ և իշխանութենէ որ ելցէ, բայց քրէական մի՛ ոք ունիցի իշխանութիւն յետս դարձուցանելոյ և զանազան կերպս փոխարկելոյ, բայց ծայրագոյն յապարանն դատաստանի հայոց, եթէ յառաջ քան զհնգետասան աւուր յետ վճռոյն յայտնի առնեն դատաստանի կամքն իւրեանց զի հաճեցան մուծանիլ 'ի յապարանն, և յետ անցանելոյ հնգետասան աւուրն վճռոյ, նա՛ վճիռն ճնայ հաստատուն և արդարութիւն մէջ գանգատողի և դատախազի։

ԳԼՈՒԽ ՄԸ.

Ամենայն ոք որ գոցի վճիռ դատաստանի, բայց քրէական մեղաց 'ի մասնաւոր դատաստանէ աւուր վճռոյ մինչև հնգետասան աւուրց ունի ժամանակ և արձակութիւն ըստ կամաց իւրոց, եթէ ընդունելոյ և եթէ հերքելոյ և մուծանելոյ ծայրագոյն յապարանն դատաստանի, յետ անցելոյ հնգետասան աւուր ժամանակի վճռոյն հաստատուն ճնասցէ վճիռն և մի՛ խախտեսցի։

ԳԼՈՒԽ ՄԹ.

Ամենայն վճիռ, բաց քրէական, յետ հնգետասան աւուր եթէ գանգատողն մի՝ ստասցի